

ԿԱՊ ՀԱՍՏԱՏԵՆՔ

ԶՈՒԳԸՆԿԵՐՈՋ ԿՈՂՄԻՑ ԲՈՆՈՒԹՅՈՒՆ

ՌԵՍՈՒՐՍՆԵՐ • ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ
ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ



ԿԱՊ ՀԱՍՏԱՏԵՆՔ

Սիրելի ընթերցող,

Այս գրքույկն անվանել ենք “Կապ հաստատենք” երկու պատճառով.

- Առաջինը՝ մենք ձեզ հետ կապ կհաստատենք՝ օգնելու համար: Եթե զուգրնկերոջ կողմից բռնությունը (կոչվում է նաև՝ Ընտանեկան Բռնություն) ձեզ վրա որևէ կերպ ազդեցություն է թողնում, լինեք դուք սուսածը, կամ վերապրող, ընկեր, ընտանիքի անդամ, աշխատակից կամ վնաս պատճառող անձը, մենք ցանկանում ենք օգնել:
- Երկրորդը՝ մենք ցանկանում ենք խրախուսել ձեզ, որ կապ հաստատեք մեզ հետ՝ օգնություն և աջակցություն ստանալու համար: Զուգրնկերոջ կողմից բռնության դեպքում դուք կարող եք ձեզ միայնակ, վախեցած, հիասթափված, շփոթված, զայրացած եւ հուսալքված զգալ: Անկախ այն բանից, թե դուք գաղտնի խորհրդատվության կարիք ունեք, օգնություն է անհրաժեշտ առավոտյան ժամը 2-ին, շտապ ապաստարան, անվճար կամ մատչելի իրավաբանական օգնություն է հարկավոր, կամ ցանկանում եք հանցագործության մասին հաղորդել կամ թեժ գիծ գտնել մեկի համար, ով վիրավորում է, կան գործակալություններ, որոնք կարող են օգնել և օժանդակություն տրամադրել ձեզ՝ առանց որևէ դատողության: Այս գրքույկից կիմանաք, թե ինչպես ձեռք բերել այդ ծառայությունները.

Եթե դուք օգտագործեք այս տեղեկատվությունն այսօր, վաղը կամ այսօրվանից մեկ տարի հետո, կամ ուղղակի փոխանցեք այն որևէ մեկին, իմացեք, որ օգնությունը հասանելի է:

Eve Sheedy

ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆ

ԼՈՍ ԱՆՋԵԼԵՍ ՎԱՐՉԱՏԱՐԱԾՔԻ

ԸՆՏԱՆԵԿԱՆ ԲՈՆՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ուր Դիմել Օգնության Համար	2
Թեժ Գծեր	3
Լրացուցիչ Հանրային Ռեսուրսներ	4
Ի՞նչ է Զուգընկերոջ Կողմից Բռնությունը	6
Դա Կարող է Պատահել Բոլորի Հետ	8
Բռնություն ԼԳԲՏԲԻ + Հարաբերություններում	9
Անվտանգության Միջոցառումներ	10
Եղեք Պատրաստված	12
Զուգընկերոջ Կողմից Բռնության (ԶԿԲ) Ենթարկված Ընտանիքներ	14
Միջամտության Ծրագրեր	15
Թմրամիջոցների և Ալկոհոլի	16
Լրացուցիչ Տեղեկատվություն	18
Իմացեք Ավելին Զուգընկերոջ Կողմից Բռնության Վերաբերյալ	20

ՈՒՐ ԴԻՄԵԼ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

Եթե դուք, կամ ձեզ ծանոթ որևէ մեկը վտանգի տակ է այս պահի,
ԶԱՆԳԱՀԱՐԵՔ 911

Պետ՞ք է զանգահարեմ թե՞ զիծ

Թե՞ զծերը հասանելի են 24 ժամ, շաբաթը յոթ օր և գրեթե միշտ գաղտնի են:

- Անհատ անձիք կարող են զանգահարել մեկի հետ խոսելու համար, քննարկել, թե ինչ տարբերակներ կան եւ ուղղորդում ստանալ՝ աջակցող ծառայություններին:
- Ընկերները, ընտանիքը եւ աշխատակիցները նույնպես կարող են զանգահարել՝ խորհուրդ ստանալու համար, թե ինչպես օգնեն այն մարդկանց, ովքեր զուգրնկերոջ կողմից բռնության (ԶԿԲ, IPV) են ենթարկվում և ուղղորդում ստանալ՝ աջակցող ծառայություններին:

Ինչպիսի՞ օգնություն է մատչելի

Չնայած բոլոր գործակալությունները չեն տրամադրում ամեն տեսակի ծառայություններ*, գործակալությունները կարող են տրամադրել.

- Իրավաբանական ծառայություններ, ներառյալ՝ օգնություն պաշտպանող հրամանների և ներգաղթային խնդիրների հետ կապված:
- Շտապ ժամանակավոր գաղտնի ապաստան այն մարդկանց և նրանց երեխաների համար, որվքեր ԶԿԲ-ի են ենթարկվում:
- Տեղափոխություն դեպի ապաստարաններ՝ անհրաժեշտության դեպքում:
- Խորհրդատվություն:
- Ուղղորդումներ՝ բժշկական, ֆինանսական, երեխայի խնամքի եւ զբաղվածության ծառայություններին:
- Երեխաների ծառայություններ:
- Ժամանակավոր կացարան տնային կենդանիների համար կամ տեղեկատվություն այն վայրերի վերաբերյալ, որտեղ կխնամեն ձեր կենդանիներին:
- Ուղղորդումներ՝ թմրամիջոցների և ալկոհոլի չարաշահման ծառայություններին:

* Ծառայությունների մեծ մասն անվճար են

ԹԵԺ ԳԾԵՐ

Լոս Անջելես Վարչական Տարածքի Ընտանեկան Բռնության Թեժ գիծ

(800) 978-3600



Այս թեժ գիծը կկապի ձեզ գործակալության հետ, որն անվճար անվտանգ և օժանդակող ծառայություններ է տրամադրում: Այս թեժ գիծը հասանելի է 24/7 և այն գաղտնի կերպով կապում է ձեզ ծառայություն մատուցողի հետ:

Ազգային Ընտանեկան Բռնության Թեժ Գիծ

(800) 799-SAFE (7233)

(800) 787-3224 (TTY)

<https://www.thehotline.org/>



Այս թեժ գիծը հասանելի է այն մարդկանց, ովքեր ԶԿԲ-ի են ենթարկվում, նրանց ընկերներին և ընտանիքին, և նրանց, ովքեր վնաս են հասցնում (կամ վախենում են, որ վնաս կհասցնեն) իրենց զուգընկերոջը: Այս թեժ գծով կապ կհաստատեք տեղական ռեսուրսների հետ: Այն հասանելի է 24/7 և գաղտնի է:

Սերը հարգանք է (24/7)

(866) 331-9474

(866) 331-8453 (TTY)

<https://www.loveisrespect.org/> կամ հաղորդագրություն ուղարկեք LOVEIS բառը 22522 համարին (Տեքստ ուղարկելը հնարավոր է վճարովի լինի՝ կախված ձեր բջջային հեռախոսի պլանից):



Այս ռեսուրսը ստեղծվել է՝ երիտասարդներին կրթելու և թույլ տալու կանխարգելել և վերջ դնել չարաշահող հարաբերություններին: Թեժ գիծը հասանելի է 24/7.

ԲԱՅՈՒՑԻՉ ՀԱՆՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

211 Լոս Անջելես Վարչական Շրջանի Տեղեկատվական Զանգերի Կենտրոն (24/7)

Զանգահարեք 2-1-1

<https://www.211la.org/>



211 LA-ը Լոս Անջելես Վարչական Շրջանի տեղեկատվության և առողջության և մարդկային ծառայություններին ուղղորդման հիմնական աղբյուրն է:

Լոս Անջելես Վարչական Շրջանի մեծահասակների նկատմամբ բռնության թեժ գիծ (24/7)

(877) 477-3646 (877-4-R-SENIORS)

<http://da.lacounty.gov/seniors>



Եթե ծերերի կամ խնամքի տակ գտնվող չափահասի նկատմամբ բռնություն է իրականացվել, կամ դրա անմիջական վտանգ կա, զանգեք 911. Այլ հանգամանքներում, դուք կարող եք հաղորդել մեծահասակի կամ խնամքի տակ գտնվող չափահասի նկատմամբ չարաշահումը՝ զանգահարելով Մեծահասակների Նկատմամբ Բռնության կիրառման թեժ գիծ:

Տուժածների Ծառայությունների Բյուրո, Լոս Անջելես Վարչական շրջանի Իրավաբանական Գրասենյակ

(800) 380-3811

<http://da.lacounty.gov/victims>



Մատուցում է կարևոր ծառայություններ Լոս Անջելես վարչական շրջանում հանցագործության տուժածներին, ներառյալ՝ ձգնաժամային միջամտություն, շտապ օգնություն, հղումներ խորհրդատվության աղբյուրներին, դատարանում ուղեկցող և կողմնորոշում, վերականգնման աջակցություն և գործի կարգավիճակի մասին ծանուցում:

Տեղեկատվություն տուժածների համար և ամենօրյա ծանուցում (VINE)

(877) 411-5588

(866) 847-1298 (TTY)

<https://www.vinelink.com/>



Եթե այն մարդուն, ով ձեզ վնասել է, կամ ձեր ծանոթներից մեկին տարել են Լոս Անջելես Վարչական Շրջանի բանտային համակարգ, կարող եք գրանցվել VINE-ում և ձեզ կծանուցեն, երբ այդ մարդուն ազատ արձակեն, այլ տեղ տանեն կամ բանտային համակարգում տեղափոխեն:

Տանն անվտանգ

(877) 322-5227

(916) 651-1304 (TTY/TDD)

<https://www.sos.ca.gov/registries/safe-home/>



ԶԿԲ-ի, հետապնդման, սեռական չարաշահման և մարդկային թրաֆիքինգի զոհերին այլընտրանքային փոստային հասցե է տրամադրում՝ օգնելու նրանց կանխել իրենց բնակելի հասցեում հայտանքերվելը:

Տուժածների Փոխհատուցման և Կառավարության Հայցերի Կալիֆորնիայի Խորհուրդ

(800) 777-9229

(800) 735-2929 (TTY)

<https://victims.ca.gov>



Փոխհատուցում է տրամադրում բռնի հանցագործության տուժածներին, ովքեր վնասվել են կամ ուն սպառնացել են վնասել: Փոխհատուցման ենթակա հանցագործության հետ կապված ծախսերից են. ունեցվածքի կորուստը, տեղափոխությունը, հոգեկան առողջության ծառայությունները և տան ու մեքենայի ձևափոխումները՝ այն տուժածների համար, ովքեր դարձել են հաշմանդամ:

Լոս Անջելես Վարչական Տարածքի Իրավաբանական Գրասենյակ

(213) 974-3512

<http://da.lacounty.gov/>



Քրեականորեն հետապնդում է Վարչական Շրջանի բոլոր հանցագործությունները և չարաշահումները որոշակի քաղաքներում և չհաստատված տարածքներում, ներառյալ՝ ընտանեկան բռնության հանցանքները:

Լոս Անջելես Բաղաքի Իրավաբանի Գրասենյակ

(213) 978-8100 (Հիմնական համարը, կարելի զանգահարել նաև մասնաճյուղերին միանալու համար)

(213) 202-5400 (Ընտանեկան Բռնության Բաժին)

<https://www.lacityattorney.org/domestic-violence>



Քրեականորեն հետապնդում է բոլոր չարաշահումները Լոս Անջելես քաղաքում, ներառյալ՝ ընտանեկան բռնության հանցանքները:

ԻՆՉ Է ՁՈՒԳԸՆԿԵՐՈՋ ԿՈՂՄԻՑ ԲՈՆՈՒԹՅՈՒՆԸ

Մարդիկ բռնություն և չարաշահում են կիրառում զուգընկերոջ հետ հարաբերություններում՝ իշխանություն և իրենց զուգընկերոջ նկատմամբ վերահսկողություն ձեռք բերելու համար: Երբեմն, մարդիկ շփոթում են զուգընկերոջ կողմից բռնությունը (IPV, ԶԿԲ) բարկության կամ անզուսպ զայրույթի հետ: ԶԿԲ-ն ցիկլ է կամ կրկնվող վարքագծերի ձև, որն օգտագործվում է զուգընկերոջ նկատմամբ իշխանություն և վերահսկողություն ձեռք բերելու համար:

ԴՐՍԵՎՈՐՈՒՄ	ՕՐԻՆԱԿՆԵՐ
Սպառնալի վարքագիծ և վախեցնել	- Վախեցնել, որ զուգընկերոջը, նրա երեխաներին, ընտանիքի անդամներին և/կամ տնային կենդանիներին վնաս կտան - Ֆիզիկական չափսը, ուժ կամ զենք օգտագործել՝ սպառնալու համար: - Ավտոմեքենայի անխոհեմ վարում՝ զուգընկերոջը վախեցնելու կամ սպառնալու համար: - Սպառնալ, որ կզանգահարի իշխանություններին՝ զուգընկերոջը և նրանց երեխաներին երկրից վտարելու համար:
Ճնշում, ոտնձգություն	- Հասարակության առջև կամ սոցիալական լրատվամիջոցներում զուգընկերոջը սպառնալ կամ վախեցնել: - Հետևել զուգընկերոջ քայլերին և շփումներին: - Անընդմեջ և կրկնվող կոնտակտ, երբ ասվել է՝ դադարեցնել: - Անցանկալի շփում զուգընկերոջ ընտանիքի անդամների կամ աշխատակիցների հետ:
Տնտեսական վերահսկողություն	- Հրաժարվել աշխատել կամ դադարեցնել ֆինանսական օժանդակությունը - Ընդհանուր եկամուտի, ռեսուրսների կամ ակտիվների հասանելիության սահմանափակում կամ մերժում: - Միջամտել կամ սաբոտաժի ենթարկել զուգընկերոջ աշխատանքը կամ կրթությունը: - Վնասել կամ խափանել զուգընկերոջ վարկային ցուցանիշը

Բռնություն կիրառող և վիրավորական վարքագիծը կարող է շատ ձևեր ունենալ. ստորև բերվող աղյուսակը բացատրում է ԶԿԲ-ի շատ տեսակներ: Չարաշահումների բոլոր նշված տեսակները հանցագործություններ չեն, բայց եթե կարծում եք, որ դուք, կամ ձեր ծանոթներից մեկը վնասվելու վտանգի մեջ է կամ նրան սպառնում են վնասել, զանգեք 911:

ԴՐՍԵՎՈՐՈՒՄ	ՕՐԻՆԱԿՆԵՐ
Գույքի փչացում	• Վնասել կահույքը, անձնական իրերը կամ մեքենաները • Պատերին/դռներին հարվածելով անցքեր բացել • Հաշմանդամ կամ հիվանդություն ունեցող զուգընկերների բժշկական սարքավորումները վնասել կամ թաքցնել:
Սեռական բռնություն	• Բռնաբարություն կամ սեռական գործողությունների պահանջ՝ անցանկալի զուգընկերոջ կողմից: • Վերարտադրողականության հարկադրում, (հղիության վերահսկողություն, չվաշտապանված սեռական հարաբերության հարկադրում, միջամտություն հակաբեղմնավորիչ միջոցների հարցում)
Ֆիզիկական վնաս	• Խփել կամ ապտակել, հրել, բռնոցքով կամ ոտքով հարվածել: • Խեղդել • Զուգընկերոջը չափից ավել կամ քիչ դեղամիջոց տալ: • Թույլ չտալ հաշմանդամություն ունեցող կամ հիվանդ զուգընկերոջը օգտվել հարմարանքներից:
Մեկուսացում	• Թույլ չտալ զուգընկերոջը հանդիպել ընկերներին և բարեկամներին: • Հեռացնել ընկերներից և ընտանիքից:
Խոսքով բռնություն	• Անընդհատ քննադատություն և վիրավորական դիտողություններ: • Մականուններով կոչել, բղավել, հայհոյել • “Գժվացնել” (զուգընկերոջը հասցնել այն վիճակին, որ նա կասկածի իր առողջամտությունը)

ԴԱ ԿԱՐՈՂ Է ՊԱՏԱՀԵԼ ԲՈՒԼՈՐԻ ՀԵՏ

Երբ ձեր
հարաբերություններում
բռնություն է տեղի
ունենում, ձեզ կարող
է թվալ, թե միակն
եք, ում հետ դա
կարող էր պատահել:
Իրականությունն այն
է, որ Զուգընկերոջ
Կողմից Բռնության
կիրառում հանդիպում
է բոլոր համայնքներում
և կարող է պատահել
բոլորի հետ՝ անկախ
ձեր սեռից, ռասայից,
ազգայությանից,
տարիքից, սեռական
կողմնորոշումից,
եկամուտից կամ
արտաքինից:

Յուրաքանչյուր անձ,
ով Զուգընկերոջ
Կողմից Բռնության
է ենթարկվում,
արժանի է օգնության և
աջակցության:

սիրական բռնություն

Ամերիկայի մեջ 3 կնոջից և տղամարդուց 1-ը
Իրանց կյանքում ընթացքում՝ Վերապրել է
սեռական բռնություն, Ֆիզիկական
բռնություն, և / կամ ցողուն մտերիմ ընկերմէ,¹

4-ից 1 կինը



և 10-ից 1 տղամարդը



ազդված են սիրական բռնությունն են

Ազդեցությունների օրինակները ներառում են
սարսափել, մտահոգված ապահովությունի մասին,
կարիք ունենալ բժշկական խնամքի, իրավապահեն
Օգնությունը, բաց թողած աշխատանքը կամ դպրոցը,
կարիք ունենալ բնակարանի կամ փաստաբանի
ծառայությունը, և այլն:

54 %



ՏՐԱՆՍԳԵՆԴԵՐ

անհատներն ենթարկվել են զուգընկերոջ
կողմից բռնության²



26%

գեյ



44%

լեսբին

անհատներն Իրանց կյանքում ընթացքում
Վերապրել է Ֆիզիկական բռնություն,
բռնաբարել և / կամ ցողուն մտերիմ ընկերմէ:¹

* օրինակներ սեռական բռնությունի մասին են բռնաբարել,
պատրաստվում ըլլալ
որոշ մեկին թափանցել, սեռական բռնադատում և / կամ
անցանկալի սեռական բռնություն:

ԲՈՆՈՒԹՅՈՒՆ ԼԳԲՏՔԻ + ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ



Ի հավելում նախորդ էջերում շարադրված վիրավորանքների տեսակների, ԼԳԲՏՔԻ + հարաբերություններում (լեսբի, գեյ, բիսեքսուալ, տրանսգենդեր, քվիր, ինտերսեքս, կասկածող և այլ ինքնություններ) որոշ չարաշահող զուգընկերներ կարող են գործադրել հավելյալ ուժ և վերահսկող վարքագիծ կիրառել: Սրանց օրինակներից են.

- “Բացահայտել” կամ վախեցնել, որ “կբացահայտի” զուգընկերոջ սեռական կողմնորոշումը և/կամ սեռական ինքնությունը ընտանիքի, գործատուի կամ ուրիշների մոտ:
- Զուգընկերոջն ասելը, որ վերջինս “արժանի” է չարաշահման՝ իր սեռական ինքնության և/կամ սեռական կողմնորոշման պատճառով:
- Ասելը, որ չարաշահումը “փոխադարձ” է կամ համաձայնեցված, ներառյալ այն դեպքերի, երբ կա իրավապահ մարմինների արձագանք:

Հավելյալ տեղեկատվության համար, այցելեք

[https://www.thehotline.org/
is-this-abuse/lgbt-abuse/](https://www.thehotline.org/is-this-abuse/lgbt-abuse/)



ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

Եթե դուք ապրում եք զուգընկերոջ հետ, ով ձեզ վիրավորանք է հասցնում, անկախ այն բանի՝ դուք ուզում եք հեռանալ այդ հարաբերությունից, թե ոչ, լավ կլինի կապվել բռնության գործադրման տեղական գործակալության հետ՝ օգնելու ձեզ անվտանգության ծրագիր մշակել: Ի հավելում, նշում ենք որոշ բաներ, որ կարող եք անել՝ օգնելու պաշտպանել ձեզ և ձեր երեխաներին:



Անգիր արեք ընկերների և ընտանիքի անդամների հեռախոսահամարները (կամ համոզվեք, որ դրանք պահված են ձեր հեռախոսի մեջ), որ կարողանաք արտակարգ իրավիճակի ժամանակ զանգահարել: Եթե ձեր երեխաները բավարար մեծ են, սովորեցրեք նրանց կարևոր հեռախոսահամարները, ներառյալ՝ երբ և ինչպես զանգել 911.



Կապի մեջ մնացեք ընկերների հետ և ճանաչեք ձեր հարևաններին: Մարդիկ կարող են վերհսկողություն գործադրել հարաբերության մեջ՝ սահմանափակելով իրենց զուգընկերոջ հասանելիությունը օգնող ցանցերին, ներառյալ՝ նրանց ընկերները, հարևանները և ընտանիքը: Աշխատեք չկտրել ձեզ մարդկանցից, նույնիսկ եթե կարծես ուզում եք, որ ձեզ հանգիստ թողնեն:



Ձեր սեփական բանկային հաշիվը բացեք, եթե կարող եք, կամ այնպես արեք, որ մատչելի փող ունենաք, եթե շտապ հարկավոր լինի.



SAFETY



Այս գրքույկը պահեք որևէ տեղում, որ ձեզ վնասող անձը չի գտնի, բայց ձեզ հասանելի կլինի՝ անհրաժեշտության դեպքում:



Կողմնորված բառ ունեցեք ընկերների և ընտանիքի հետ՝ ահազանգելու նրանց, երբ օգնության կարիք կունենաք:

Փախուստի ծրագիր մշակեք ձեր և ձեր երեխաների համար՝ օգտագործելու արտակարգ իրավիճակի դեպքում: Կապվեք ընտանեկան բռնության տեղական գործակալության հետ՝ օգնության համար զանգահարելով **Los Angeles County Domestic Violence Hotline at (800) 978-3600:**



Ստորև նշում ենք տեղեկատվության և իրերի ցանկ, որոնք ձեզ կարող են անհրաժեշտ լինել անվտանգության համար և/կամ, եթե որոշեք հեռանալ: Ամբողջ տեղեկատվությունը պահեք ապահով տեղում: Կարող եք տեղեկատվության/փաստաթղթերի պատճենները պահել շարժական հիշողության քարտի վրա, որը կարող եք պաշտպանել գաղտնաբառով:

Ծանոթագրություն. Բռնության Տեղական կազմակերպություններն ունեն աշխատակիցներ, որոնք կօգնեն ձեզ **անվտանգության ծրագիր մշակել**՝ անկախ այն բանից, թե դուք ուզում եք հեռանալ հարաբերությունից, թե՛ ոչ: Զանգահարեք այս գրքույկի 3-րդ էջում նշված հեռախոսահամարով՝ այն գործակալություններ հղումներ համար, որոնք կարող են օգնել:

1. Կարևոր հեռախոսահամարներ:

- Ոստիկանություն. 911 և ձեր տեղական ոստիկանության բաժինը
- Լոս Անջելես Վարչական Տարածքի Ընտանեկան Բռնության Թեժ Գիծ.
(800) 978-3600
- Փաստաբան (եթե որևէ ծանոթ մեկին ունեք)


2. Ընկերների և ընտանիքի անդամների հետ կոնտակտային տվյալներ
3. Այն վայրերի հասցեներն ու հեռախոսահամարները, ուր կարող եք գնալ, եթե հարկ լինի շտապ հեռանալ:
4. Ստորև բերվող փաստաթղթերի պատճենները ի պահ տվեք որևէ մեկին, ում վստահում եք (Կարող է չունենաք այս բոլոր փաստաթղթերը: Հավաքեք ինչ կարող եք).
 - ☐ Վարորդական Իրավունք/Իքնությունը հաստատող քարտ
 - ☐ Ծննդյան վկայական(ներ)
 - ☐ Սոցիալական ապահովության քարտ(եր)
 - ☐ Երեխաների դպրոցի փաստաթղթեր
 - ☐ Առողջական ապահովագրության/Medi-Cal քարտեր
 - ☐ Կյանքի ապահովագրության վկայագրեր
 - ☐ Բանկի հաշվեհամարի տվյալները
 - ☐ Հանրային օգուտի նույնականացման քարտ (WIC, SNAP, SSI, GR, այլն.)
 - ☐ Բաժանման /խնամակալության փաստաթղթեր
 - ☐ Անձնագիր/գրին-քարտ/աշխատանքի իրավունք/վիզա
 - ☐ Երեխաների անձնագրերը կամ գրին-քարտերը
 - ☐ Վարձակալության պայմանագրեր կամ տան
 - ☐ փաստաթղթեր
 - ☐ Ավտոմեքենայի գրանցում/ապահովագրություն
 - ☐ Արդեն ծանուցված զսպող հրամանների պատճեններ
5. **Ցանկալի է այս իրերը միասին ունենալ և պահել դրանք անվտանգ տեղում կամ տվեք դրանք որևէ մեկին, ում վստահում եք.**
 - ☐ Մեքենայի հավելյալ բանալիներ
 - ☐ Որոշ հավելյալ գումար և դեղամիջոցներ
 - ☐ Հագուստի որոշ պարագաներ՝ ձեր և ձեր երեխաների համար

ԶԿԲ-Ի ԵՆԹԱՐԿՎԱԾ ԸՆՏԱՆԻՔՆԵՐ

Զուգընկերոջ Կողմից Բռնությունը վտանգ է ներկայացնում ոչ միայն թիրախ հանդիսացող անձի, այլ նաև նրա անմիջական ընտանիքի անդամների, ներառյալ երեխաների համար: Միայն ԶԿԲ-ի վկա լինելը, երեխաներին դնում է երկարաժամկետ, բացասական, սոցիալական, ֆիզիկական և հոգեկան առողջության վտանգի տակ: ԶԿԲ-ի ենթարկված երեխաներին ավելի շատ են սպառնում.

1. **Ֆիզիկական առողջության խնդիրներ**– խրոնիկ հիվանդություններ, ինչպիսիք են՝ շաքարախտը, գիրությունը և սրտի հիվանդությունը
2. **Հոգեկան առողջության խնդիրներ** – ջղագրգռվածություն, դեպրեսիա, ալկոհոլի և թմրանյութերի օգտագործում
3. **Սոցիալական խնդիրներ** – ընկերներ ձեռք բերելու դժվարություններ, կոհիվներ ընկերների, ընտանիքի հետ, հասակակիցներին նեղելը, բռնության կամ վիրավորանքի ենթարկվելը և/կամ վիրավորել և բռնություն ցուցաբերելը իրենց իսկ անձնական հարաբերություններում, իրավական և քրեական խնդիրներ:

Եթե դուք ծնող եք, ով ԶԿԲ-ի է ենթարկվում, դժվար կլինի իմանալ, թե ինչպես պաշտպանեք ձեր երեխային: Օգնություն ստացեք՝ զանգահարելով 3-րդ էջում նշված թեժ գծերի հեռախոսահամարներով:



ՄԻՋԱՄՏՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐ



Մարդիկ, որոնք բռնություն են գործադրում, կամ սպառնում են վնասել իրենց զուգընկերներին, կարող են ունենալ ցանկացած սեռական պատկանելություն, ռասա, ազգություն, տարիք, սեռական կողմնորոշում, եկամուտ կամ արտաքին:

Բռնությունը, ներառյալ վիրավորանքի տեսակները՝ ուժի և վերահսկման կիրառմամբ, ինչպիսին է ԶԿԲ-ն, ձեռք բերովի վարքագծեր են (երբեմն մանկության տարիների փորձի արդյունք), որը կարելի է փոխարինել խնդիրները հաղթահարելու ոչ-բռնի կարողություններով և բուժմամբ: Բաթերերի միջամտության ծրագրեր (BIPs) կոչվող ծրագրերը հասանելի են այն մարդկանց համար, որոնք վնաս են հասցնում կամ վտանգ կա, որ վնաս կհասցնեն իրենց զուգընկերներին: Լոս Անջելես Վարչական Շրջանի Փորձաշրջանի Դեպարտամենտը վերահսկում է BIP-երը և պահում է Վարչական Շրջանում ընդունված գործող ծրագրերի ցուցակ:

Կարող եք զանգահարել Փորձաշրջանի Բաժին (866) 931-2222 համարով կամ այցելեք

<https://probation.lacounty.gov/>. Այն մարդիկ, ովքեր

(կամ զգում են վտանգ, որ կվնասեն) վնասում են իրենց զուգընկերոջը, կարող են զանգահարել

Ընտանեկան Բռնության Ազգային Թեժ Գիծ (800) 799-SAFE համարով՝ օգնության համար: Անչափահասները, ովքեր (կամ զգում են վտանգ, որ կվնասեն) իրենց զուգընկերներին, կարող են զանգահարել **Love is Respect at (866) 331-9474**.



Ալկոհոլի և թմրանյութերի օգտագործման և ԶԿԲ-ի միջև հատումը բարդ է: Տվյալները ցույց են տալիս, որ շատ մարդիկ ենթարկվում են և ԶԿԲ-ի, և ալկոհոլի և թմրանյութերի օգտագործմանը կամ չարաշահմանը:³

Թմրանյութերի և ալկոհոլի չարաշահումը, հայտնի է նաև որպես՝ Թմրանյութերի և ալկոհոլի օգտագործման խանգարում, հիվանդությունն է, որը ազդում է ուղեղի աշխատանքի վրա և կարող է բերել վնասող և ինքնաքայքայման վարքագծի: Ալկոհոլի կամ թմրանյութերի օգտագործումը հաճախ կիրառվում է՝ ԶԿԲ-ի արդյունքում ունեցած վնասվածքը կամ վախը հաղթահարելու կամ “թմրեցնելու” համար: Թմրանյութերն ու ալկոհոլը կարող են կիրառվել նաև որպես չարաշահող վարքագիծ՝ զուգընկերներին նկատմամբ իշխանություն և վերասկողություն ցուցաբերելու նպատակով: Նման վարքագծերի օրինակներ են.

- Թմրանյութերի/ալկոհոլի ստիպողական կիրառում
- Առողջանալու կամ օգտագործումը քչացնելու փորձերը խանգարելը
- Բուժման դիմելուն խանգարելը
- Ստիպել տուժողին թողնել թմրանյութերի/ալկոհոլի օգտագործումը
- Սպառնալ հայտնել իրավապահ մարմիններին կամ երեխաներին պաշտպանող գործակալություններին տուժողի կողմից թմրանյութերի օգտագործման վերաբերյալ

Երբ հարաբերությունները ենթարկվել են և բռնության, և թմրանյութերի և ալկոհոլի կիրառման ազդեցությանը, շատ կարևոր է օգնություն ստանալ երկու ոլորտներում էլ

ԼՈՍ ԱՆՋԵԼԵՍ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ, ԹՄՐԱՆՅՈՒԹԵՐԻ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԻ ՉԱՐԱՇԱՀՄԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄ ԵՎ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ

Լոս Անջելես Վարչական Շրջանում ապրող երիտասարդների և չափահասների համար, ովքեր գրանցված են կամ իրավասու են օգտվել Medi-Cal, My Health LA, և Վարչաշրջանի կողմից ֆինանսավորվող այլ ծրագրերից, կան թմրանյութերի և ալկոհոլի օգտագործման խանգարման բուժման անվճար ծառայություններ:

Թմրանյութերի և ալկոհոլի օգտագործման խանգարման բուժման առկա ծառայություններից են.

- Ամբուլատոր բուժում – ավելի քիչ ինտենսիվ բուժման համայնքային ծառայություններ
- Ինտենսիվ ամբուլատոր բուժում - ավելի ինտենսիվ բուժման համայնքային ծառայություններ
- Կախվածության բուժման դեղամիջոցներ – FDA-հաստատված դեղամիջոցներ, որոնք օգտագործվում են վարքագծի թերապիայի հետ միասին
- Թմրանյութերից ու ալկոհոլից հրաժարվելու կառավարում– հայտնի է նաև, որպես դետոքսիկացիա
- Բնակելի հաստատությունում բուժում – կարճաժամկետ բնակելի հաստատություն, որտեղ բուժման ծառայություններ են իրականացվում
- Վերականգնողական օժանդակող ծառայություններ – ծառայություններ, որոնք տրամադրվում են բուժումը վերջացնելուց հետո՝ վերականգնմանը նպաստելու համար:
- Վերականգնման կամուրջ բնակելի հաստատություն – տրամադրում է ժամանակավոր բնակատեղ, բուժման հետ կապված (նման է սթափ ապրելուն)

Ավելին իմանալու համար զանգահարեք Թմրանյութերի և Ալկոհոլի Չարաշահման Ծառայությունների

Օգնության Գիծ (SASH) անվճար, օրը 24 ժամ, շաբաթը 7 օր **(844) 804-7500 համարով**, որտեղ որակովորում ստացած աշխատողների թիմը կօգնի ձեզ իմանալ ձեր տարբերակների մասին և գտնել ծառայություն մատուցող, որը կբավարարի ձեր հատուկ կարիքները:

Դուք կարող եք նաև գտնել թմրանյութերի և ալկոհոլի չարաշահումից խանգարման բուժում տրամադրող օգտվելով ռեսուրսների առցանց տեղեկատուից <http://sapccis.ph.lacounty.gov/sbat/>.



Եթե դուք կամ ձեր մտերիմներից մեկը խնդիր ունի ալկոհոլի կամ թմրանյութերի օգտագործման հետ կապված, կարևոր է, որ իմանաք. բուժումը արդյունք է տալիս, և բուժվել հնարավոր

ՄԻՋԱՄՏՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐ

Հետևյալ տեղեկատվությունը տրամադրվում է միայն ուղեցույցի կարգով: Խնդրում ենք, խորհրդակցել իրավաբանի հետ՝ որոշելու, թե ինչպես, երբ և արդյոք այս իրավունքներն ու ծառայությունները վերաբերվում են ձեր իրավիճակին: Բռնության տեղական գործակալությունները կարող են, կամ օգնել ձեզ իրավաբանական օժանդակությամբ, կամ ուղղորդել ձեզ մեկի մոտ, որը անվճար կամ շատ ցածր արժեքով օգնություն կտրամադրի:

ՆԵՐԳԱՂԹ

Փաստաթղթեր չունեցող անձը, որը ԶԿԲ-ի է ենթարկվում, կարող է այլ խնդիրների հետ առնչվել, որը ավելի կոթվարեցի օգնություն ստանալը և կարող է տուժել չարաշահման լրացուցիչ ձևերից:

Կալիֆորնիայում ԶԿԲ-ի ենթարկված անձանց համար առկա են հետևյալ ծառայությունները, նույնիսկ եթե նրանք փաստաթղթեր չունեն:

- Ոստիկանության օժանդակություն
- Դատարանի զսպող հրամաններ
- Երեխաների խնամակալություն և օժանդակություն
- Ծառայություններ՝ ապաստարաններից և այլ ԶԿԲ ծրագրերից:
- Շտապ բուժ օգնություն
- ԱՄՆ քաղաքացի երեխաները կարող են ստանալ հանրային օգնություններ; և
- Բռնություն գործադրողները քրեականորեն կհետապնդվեն

ԶԿԲ-ԻՆ ՎԵՐԱԲԵՐՎՈՂ ԱՅԼ ՕՐԵՆՔՆԵՐ

Խոսեք իրավաբանի հետ, իմանալու՝ թե ներկայացվող տարբերակների մեջ կան արդյոք ձեզ վերաբերվող կամ հասանելի տարբերակներ: Բռնության տեղական կազմակերպությունը կարող է իրավաբանական օգնություն տրամադրել կամ ուղղորդել ձեզ որևէ մեկին, ով կարող է իրավաբանական օգնություն տրամադրել:

Բնակարան

Կալիֆորնիայի բնակարանային օրենքը թույլ է տալիս վարձակալին ավարտել բնակարանի վարձակալման պայմանագիրը՝ մինչ դրա լրանալը, եթե վարձակալը, (կամ

նրա ընթանիքի անդամը) ենթարկվել է զուգընկերոջ կողմից բռնության, սեռական չարաշահման, հետապնդման, մեծահասակի նկատմամբ բռնության կամ մարդկային տրաֆիքինգինգ: (Cal.Civ.Code § 1946.7(a)) (Որոշակի փաստաթղթերի և պայմանների պահանջներ կան):

Ոստիկանության հաշվետվության անվճար պատճե

Կալիֆորնիայի Ընտանեկան օրենսգիրք 6228 – Պետական և տեղական իրավապահ մարմինները պահանջի դեպքում պետք է տուժածին կամ նրա ներկայացուցչին (սահմանված կարգով) անվճար տրամադրեն բոլոր պատահարների վերաբերյալ հաշվետվությունների երեսի էջերի մեկական պատճե, բոլոր պատահարների վերաբերյալ հաշվետվությունների մեկական պատճե կամ երկուսն էլ:

ԶՍՊՈՂ ՀՐԱՄԱՆՆԵՐ ԵՎ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐ

Կալիֆորնիայում գործում են շատ տարբեր տեսակի զսպող և պաշտպանող հրամաններ: Որոշ տեսակի հրամաններ կարող են տրվել ոստիկանության կողմից, որոշ հրամանների համար պետք է դիմեք Գերագույն Դատարան:

Զսպող և պաշտպանող հրամանները դատարանի հրամաններ են:

Դրանք ասում են տվյալ անձին, թե նա ինչ կարող է, կամ չի կարող անել: Սա կարող է ներառել, թե տվյալ անձը ձեզնից ինչ հեռավորության վրա կարող է գտնվել, կարո՞ղ է արդյոք նա ձեզ կամ ձեր երեխաների հետ կապ հաստատել, բնակարանը լքելու հրամաններ, երեխայի խնամքի և այցելությունների հրամաններ, սեփականությանը կամ տնային կենդանիներին վերաբերող հրամաններ և ավելին: Կան նաև զսպող հրամաններ, որոնք պահանջում են, որ տվյալ անձը հրաժարվի ունեցած զենք ու զինամթերքից և թույլ չեն տալիս նորը գնել:

Խոսեք իրավաբանի հետ, որպեսզի պարզեք, թե այս հրամաններից որոնցից կարող եք օգտվել: Բռնության տեղական գործակալությունը կարող է ձեզ իրավաբանական օժանդակություն տրամադրել կամ ուղղորդել ձեզ որևէ մեկին, ով կկարողանա իրավաբանական օգնություն տրամադրել:

ՉՈՒԳԸՆԿԵՐՈՋ ԿՈՂՄԻՑ ԲՈՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՎԵԼՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ



Հնտանեկան Բռնությանը Վերջ Դնելու
Կալիֆորնիայի Գործընկերություն

(916) 444-7163

www.cpedv.org



Հնտանեկան Բռնության Դեմ Ազգային
Միություն

(303) 839-1852

www.ncadv.org

Sources:

- 1 Smith, S.G., Zhang, X., Basile, K.C., Merrick, M.T., Wang, J., Kresnow, M., Chen, J. (2018). The National Intimate Partner and Sexual Violence Survey (NISVS): 2015 Data Brief – Updated Release. Atlanta, GA: National Center for Injury Prevention and Control, Centers for Disease Control and Prevention.
- 2 James, S. E., Herman, J. L., Rankin, S., Keisling, M., Mottet, L., & Anafi, M. (2016). The Report of the 2015 U.S. Transgender Survey. Washington, DC: National Center for Transgender Equality.
- 3 Rivera, E. A., Phillips, H., Warshaw, C., Lyon, E., Bland, P. J., Kaewken, O. (2015). An applied research paper on the relationship between intimate partner violence and substance use. Chicago, IL: National Center on Domestic Violence, Trauma & Mental Health.

Reaching Out for Safety and Support



ԿԱՊ ՀԱՍՏԱՏԵՆՔ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ
ԵՎ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

ԿԱՊ ՀԱՍՏԱՏԵՆՔ

ԼՈՍ ԱՆՋԵԼԵՍ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔԻ ՆԱԽԱԳԱՀՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ

Hilda L. Solis, First District

Mark Ridley-Thomas, Second District

Sheila Kuehl, Third District

Janice Hahn, Fourth District

Kathryn Barger, Fifth District

ԼՈՍ ԱՆՋԵԼԵՍ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ

Barbara Ferrer, PhD, MPH, MEd, Director

Muntu Davis, MD, MPH, Health Officer

Cynthia A. Harding, MPH, Chief Deputy Director

Deborah Allen, ScD, Deputy Director for Health Promotion Bureau

Eve Sheedy, Esq, Executive Director, Domestic Violence Council

ՀԱՏՈՒԿ ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ.

- The Los Angeles County Commission for Women
- Public and private agencies who support those impacted by Intimate Partner Violence

ԱՅՍ ԳՐԹՈՒՅԿԻ ՊԱՏՃԵՆԵՐ ՁԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ՝ ԴԻՄԵՔ.

Լոս Անջելես Վարչական Տարածքի Հանրային Առողջության Դեպարտամենտ
Ընտանեկան Բռնության Խորհուրդ

(213) 974-2799

dvc@ph.lacounty.gov

<http://publichealth.lacounty.gov/dvcouncil/>